«ՏԱՐԱԺԱՄԿԵՏ ՎՃԱՐՈՒՄ» ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. «Տարաժամկետ վճարում» ծառայությունը «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ, «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ կողմից տրամադրվող ծառայություն է, որը հնարավորություն է տալիս Բաժանորդին մարել կուտակված պարտքը՝ մաս-մաս և հավասարաչափ՝ ըստ ամիսների: Սույն պայմաններով սահմանված ժամկետը ընտրվում է բաժանորդի կողմից (այսուհետ՝ Սահմանված ժամկետ): Սահմանված ժամկետը կարող է լինել 3, 6 ամիս տևողությամբ: Այսինքն, բաժանորդի կողմից ընտրված չափով «Տարաժամկետ վճարման» ենթակա պարտքը (այսուհետ՝ Տարաժամկետ վճարման ենթակա պարտք) բաժանվում է (հավասարաչափ բաշխվում է) Սահմանված ժամկետի ամիսների քանակի վրա, որը Սահմանված ժամկետի յուրաքանչյուր ամսվա մասով գումարվում է տվյալ ամսվա ընթացքում մատուցված ծառայությունների համար հաշվեգրված բաժանորդավճարին, որն էլ ամբողջությամբ ենթակա է վճարման բաժանորդի կողմից՝ համաձայն «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ վճարման կարգի:
2. Տարաժամկետ վճարման ենթակա պարտքը չի կարող գերազանցել «Տարաժամկետ վճարման» դիմումի ներկայացման ամսվան նախորդող ամսվա/ամիսների ծառայությունների համար հաշվեգրված ընթացիկ պարտքի և ընթացիկ ամսվա սկզբից մինչև Տարաժամկետ վճարման դիմումի պահը մատուցված ծառայություններից գոյացած պարտքի հանրագումարը:
3. Տարաժամկետ վճարման ենթակա պարտքը Սահմանված ժամկետի յուրաքանչյուր ամսվա ընթացքում շարունակում է հավասարաչափ հաշվեգրվել Բաժանորդի հաշվին նույնիսկ այն ժամանակահատվածում, որի ընթացքում Ծառայությունների մատուցումը ժամանակավոր կասեցված է բաժանորդի ցանկությամբ կամ Ծառայությունների մատուցումը կասեցված է՝ վճարումների ուշացման պատճառով: Օպերատորի և Բաժանորդի միջև պայմանագրի դադարեցման (միակողմանի կամ երկկողմանի) դեպքում տարաժամկետ վճարման ենթակա պարտքի մնացորդը գումարվում է Բաժանորդի ընդհանուր պարտքին, որը ամբողջությամբ ենթակա է վճարման Բաժանորդի կողմից՝ համաձայն «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ վճարման կարգի:
4. Սույն պայմաններով Բաժանորդի մոտ միաժամանակ կարող է ակտիվ լինել առավելագույնը 1 «Տարաժամկետ վճարում» ծառայություն:
5. Եթե բաժանորդն արդեն իսկ ակտիվացրել է «Տարաժամկետ վճարում» ծառայություն, ապա նա կարող է իր դիմումի հիման վրա դադարեցնել այն Սահմանված ժամկետից շուտ: Տվյալ դեպքում Տարաժամկետ վճարման ենթակա պարտքի մնացորդը գումարվում է ընթացիկ ամսվա ընթացքում մատուցված ծառայությունների դիմաց հաշվեգրման ենթակա պարտքին, որը ենթակա է վճարման «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ կողմից սահմանված վճարման կարգով:
6. Սույն պայմաններով սահմանված «Տարաժամկետ վճարում» ծառայությունը հնարավոր է ակտիվացնել թե՛ Վաճառքի և սպասարկման սրահներում՝ ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ կողմից տրամադրվող տարաժամկետ վճարման հայտի հիման վրա, թե՛ «Հեռախոսային սպասարկում» ծառայության միջոցով:
7. Սույն պայմաններով սահմանված կարգով «Տարաժամկետ վճարում» ծառայությունը հնարավոր է ակտիվացնել մինչև ՀՀ-ում Ռազմական դրության ժամկետի ավարտը:

| | | | |
|---|---|---|---|
| «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ | | «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ | |
| Գլխավոր տնօրեն՝ | | Գլխավոր տնօրեն՝ | |
| Հայկ Ֆարամազյան | կ.տ. | Արթուր Ամիրխանյան | կ.տ. |

«___» _____ 2020р.

«___» _____ 2020р.